ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

31 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 87 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25/03/2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 81Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

Եղեգիս համայնքի ղեկավարի 25-ը մարտի 2025 թվականի «Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասը առանձին՝ երկու միավորների բաժանելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 81Ա որոշման բովանդակության 1.-ին կետի 1)-ին ենթակետում «5,54459» թիվը փոխարինել «5,54484» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇԽԱՐՈՒՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. մարտի 31 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

1 ԱՊՐԻԼԻ 2025 թվականի N 88 Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

Համայնքային ենթակայության ճանապարհների վրա ճանապարհային անվտանգ երթևեկությունը և տրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումն ապահովելու նպատակով կազմակերպել ու իրականացնել անվտանգ երթևեկությանը խոչընդոտող ծառերի ճյուղերի կտրում, ինչպես նաև փոսալցման աշխատանքների իրականացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. ապրիլի 1 ք.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 89Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ, ԱՆՉԱՓԱՀԱՍ, ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԱՆԱՀԻՏ ՄԻՇԱՅԻ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 02-ը հունիսի 2016թ. N631-Ն որոշմամբ ընդունված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ կետ 1-ին մասի ա/ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի ապրիլի 1-ի Եղեգիս համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի Հորս գյուղի բնակչուհի, անչափահաս, առանց ծնողական խնամքի մնացած Անահիտ Միշայի Մովսեսյանի (ծնված 06/05/2022 թվականին) նկատմամբ սահմանել խնամակալություն:

2.Խնամակալ նշանակել անչափահաս Անահիտ Միշայի Մովսեսյանի հայրական կողմի տատիկին՝ Անահիտ Աղամիրի Մովսեսյանին (ծնված՝ 20/06/1955թ.)՝ իր դիմումի համաձայն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025թ. ապրիլի____ 01 ____
Եղեգիս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

4 ԱՊՐԻԼԻ 2025 թվականի N 90 Ա

ՍԻՐԵԿԱՆ ՆՈՐԱՅՐԻ ԲԱԲԱՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի 10102QCLELBQ քաղվածքը, ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՎԴ4/0048/02/24 քաղաքացիական գործով 16.12.2024թ. վճիռը՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Սիրեկան Նորայրի Բաբայանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0011-0008, մակերեսը 0,32հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հերմոն գյուղ, 5-րդ փողոց, 1-ին փակուղի, տուն 1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇԽԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. ապրիլի 4 հ.Եղեգիս